ՀՐԱՒԷՐ

Հոգևոր Իշխանութիւնը պարտք է համարում իրան «Արարատ» ամսագրի միջոցաւ դիմել իւր սիրելի ազգայնոց և խնդրել օգնութեան ձեռք մեկնել աղքատ և չքաւոր քաղցածներին, որոնք ահա մէկ ամսից աւելի է որ խումբ խումբ ամենայն օր դիմում են ս. Էջմիածին և հաց են խնդրում: Հոգևոր Իշխանութիւնը տեսնելով նրանց դառն արտասուքը բացեց նրանց առաջը իւր շտեմարանի դռները ոմանց փոխարինաբար, ոմանց ձրի և ոմանց գնի զիջողութեամբ ցորեն տալով օգնեց. բայց Էջմիածինը այնքան նիւթական միջոց չունենալով բոլորի կարիքը լցնելու՝ դիմում է Հայազգին և խնդրում է նորա ուշադրութիւնն իւր աղքատ և չքաւոր եղբարց վրայ. իրանց կարեաց չափով նուէրք տուողներն անուանական ցուցակով կարող են ուղարկել իրանց նուէրներն ս. Էջմիածին, աղքատ չքաւորներին հասցնելու համար: